## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ԺՆԵՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 14 փետրվարի 2000 թ.:**

Այսօր, առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հնգօրյա այցով մեկնեց Ժնև:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿՆԱԽԱԳԱՀԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՐԱՎԱՐԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 18 փետրվարի 2000 թ.:**

Կիրակի օրը, փետրվարի 20-ին, առավոտյան ժամը 10-ին, ազգային հերոս Անդրանիկ Զորավարի աճյունը կփոխադրվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Հավարտ Ս. Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի կունենա հոգեհանգստյան արարողություն: Նորին Սրբությունն իր Հայրապետական պատգամը կհաղորդի ներկաներին՝ Հայոց Մեծ Զորավարի աճյունը հայրենի հողին վերադարձնելու պատմական առիթով:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*